Արձանագրություն 2
ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ ՇՀԱՇՁԲ-15/3-26/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 20.04.2017թ. ժամը 14:00-ին /Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Մ. Սարգսյան –ՀՀ ՖՆ Գործերի կառավարման վարչության պետ ԳՊ/ԳԱՊ /հանձնաժողովի նախագահ/

Անդամներ

Է. Պողոսյան- ՀՀ ՖՆ ԳԿՎ սպասարկման բաժնի պետ ԳՊ/ԳԱ

Ա. Գրիգորյան- ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԲԱ

Մ. Միքաելյան -ՀՀ ՖՆ ԳԿՎ վարչատնտեսական և շենքերի շահագործման բաժնի գլխավոր մասնագետ ԳՊ/ԳԱ

Ա. Ղազարյան - ՀՀ ՖՆ Գործերի կառավարման վարչության տնտեսագետ ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող

Ա. Մարտիրոսյան՝ ԳԿՎ Սպասարկման բաժնի առաջատար մասնագետ

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

1.1 ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ ՇՀԱՇՁԲ-15/3-26/17» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել «Միսմա» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 02572795, հասցե՝ Հանրապետության 49, 7/1, էլ հասցե info@misma.am, ԱՁ Արման Ասմանգուլյանը՝ հասցեն ք. Երևան, Ներսիսյան 1, 17, էլ. հասցեն՝ armana6@mail.ru, Հեռ. (091) 19 29 00, ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ ՍՊԸ-ն՝ ք. Երևան, Հ.Հակոբյան 3, էլ. հասցեն print-lp@yandex.ru, Հեռ. (091)422282, «ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ն՝ ՀՀ. ք. Երևան, Մանուշյան 96, էլ. հասցեն՝ vsiryog@mail.ru, Հեռ. (010) 321222 և «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ն՝ ք. Երևան, Ն.Դումանի 1, բն. 56, էլ. հասցեն՝ haykarli@mail.ru, հեռ. (091)206115:

1.1 Համակարգում 20.04.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին, բացի «Միսմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որի գնային առաջարկում ընդհանուր գինը գրված չէ թվերով, այլ գրված է միայն տառերով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	Զ/Հ1	Զ/Հ1
«ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ	86 940	86 940
«ՀԵԼՆ ՊՐԻՆՏ» ՍՊԸ	302 000	302 000
«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	315 000	378 000
«Միսմա» ՍՊԸ	604 800	604 800
ԱՁ Արման Ասմանգուլյան	630 000	756 000

4.1 Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 630 000 /վեց հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 «ՀՀ ՖՆ ՇՀԱՇՁԲ-15/3-26/17» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

5.2 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և «ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, և ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 47-րդ կետի 1-ին մասի համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 5.2 կետում նշված փաստաթղթերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան 2017թ. ապրիլի 27-ը ժամը 11:00-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Մ. Սարգսյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Է. Պողոսյան
	_____	Ա. Գրիգորյան
	_____	Ա. Ղազարյան
	_____	Մ. Միքաելյան
Գնումները համակարգող՝	_____	Ա. Մարտիրոսյան